Հաստատված է
«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
« 29 » օգոստոսի 2022թ-ի նիստում

Գիտական խորհրդի նախագահ _____ Ե. Սերոբյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) պատվավոր կոչումների և պարգևների շնորհման կարգն ու պայմանները:
2. Հիմնադրամի պատվավոր պարգևները և կոչումները շնորհվում են Հիմնադրամի ռեկտորի ներկայացմամբ՝ Հիմնադրամի գիտական խորհրդի որոշմամբ:
3. Հիմնադրամում սահմանվում են հետևյալ պատվավոր կոչումները և պարգևները, որոնք տրվում են սահմանված պահանջները բավարարող անձանց.

3.1. «Շիրակի պետական համալսարանի ոսկե մեդալ» պարգևը Հիմնադրամի ռեկտորի ներկայացմամբ և Գիտական խորհրդի որոշմամբ տրվում է.

ա) Հիմնադրամի աշխատողներին՝ բեղմնավոր և արգասավոր գործունեություն ծավալելու համար, համալսարանական կրթության զարգացման գործում նշանակալի ավանդի, ՇՊՀ-ի հիմնադրման հոբելյանի, ինչպես նաև աշխատողի ծննդյան հոբելյանի առթիվ,

բ) Հիմնադրամի բարերարներին,

գ) Հիմնադրամի նշանավոր հյուրերին,

դ) ակադեմիական համակարգի հաստատություններին կամ դրանց աշխատողներին՝ գիտության և կրթության բնագավառում նշանակալի ձեռքբերումների համար, ինչպես նաև ծննդյան հոբելյանի առթիվ,

ե) Հիմնադրամի՝ միջազգային հեղինակավոր (վարկանիշային) մրցույթներում և առաջնություններում 1-ին տեղ զբաղեցրած ուսանողներին, աշակերտներին:

3.2. «Շիրակի պետական համալսարանի պատվավոր պրոֆեսոր» պատվավոր կոչումը Հիմնադրամի ռեկտորի ներկայացմամբ և Գիտական խորհրդի որոշմամբ տրվում է.

ա) արտասահմանյան գիտակրթական կենտրոնների պրոֆեսորներին՝ Հիմնադրամի հետ երկարատև և բեղմնավոր համագործակցության համար,

բ) Հիմնադրամում առնվազն 40 տարվա գիտատամանկավարժական աշխատանքի ստաժ ունեցող, առնվազն հինգ գիտությունների թեկնածու պատրաստած աշխատակիցներին։

3.3. «Շիրակի պետական համալսարանի պատվավոր դոկտոր» պատվավոր կոչումը Հիմնադրամի ռեկտորի ներկայացմամբ և Գիտական խորհրդի որոշմամբ տրվում է.

ա) պետական, քաղաքական, հասարակական գործիչներին, ականավոր գիտնականներին և մշակութային գործիչներին (այդ թվում՝ օտարերկրացի),

բ) արտասահմանյան գիտակրթական կենտրոնների գիտնականներին՝ Հիմնադրամի հետ երկարատև համագործակցության համար։

3.4. «Շիրակի պետական համալսարանի ամբիոնի պատվավոր վարիչ» պատվավոր կոչումը Հիմնադրամի ռեկտորի ներկայացմամբ և գիտական խորհրդի որոշմամբ տրվում է առնվազն 20 տարի Հիմնադրամում ամբիոնի վարիչ աշխատած պրոֆեսորին՝ ամբիոնի վարիչի պարտականությունները վայր դնելու կապակցությամբ։

4. Հիմնադրամի պատվավոր կոչումներ և պարգևներ ստացած անձանց հաշվառումն իրականացնում է Հիմնադրամի գիտական քարտուղարը։

5. Սույն կանոնակարգում լրացումները և փոփոխությունները կատարվում են Հիմնադրամի ռեկտորի ներկայացմամբ՝ Հիմնադրամի Գիտական խորհրդի որոշմամբ։